**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 12 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Աննա Չարչյանի և Կարինե Սահակյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Աննա Չարչյանը և Կարինե Սահակյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի փետրվարի 23-ին) խնդրելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ և 149.5-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասի «տուժողի» եզրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18, 19, 21 և 83.5-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

**1.** Դիմողների կարծիքով, «...գործի նոր քննության ընթացքում դատավարության կողմերին հայցի առարկան և իրավական ու փաստական հիմքերի փոփոխության, նոր ապացույցներ ներկայացնելու, հայցային վաղեմություն կիրառելու հիմքով հայցը մերժելու միջնորդություն ներկայացնելու հնարավորություններ ընձեռող իրավադրույթները անհամատեղելի են ՀՀ Սահմանադրության 19-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածներով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի...հետ...»:

Դիմողները գտնում են, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող 313-րդ հոդվածում բացահայտված չէ «տուժող» եզրույթը, որևէ այլ նորմ չի սահմանում, թե ով կարող է հանդիսանալ տուժող: Այս նորմն ընդունելիս օրենսդիրը դրան իրավական որոշակիություն չի հաղորդել, և այն չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, իրավական որոշակիությունը բացակայում է նաև տուժողի հայցով դատարանի կողմից գործարքն անվավեր ճանաչելու ձևակերպման մեջ:

Դիմողները դիմումում ներկայացրել են նաև այլ փաստարկներ:

**2.** Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ առկա են դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

**2.1.** դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ և 149.5-րդ հոդվածները չեն կիրառվել դիմողների նկատմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին որպես պարտադիր պայման համարվող պահանջներն ինքնանպատակ չեն: Դրանք կոչված են ապահովելու սահմանադրական արդարադատություն իրականացնելու սահմանադրական դատարանի պատշաճ և արդյունավետ գործառույթի իրականացումը՝ դատարանին ձերբազատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետևանքով դատարանն անհիմն ծանրաբեռնե-

լուց, այնպես էլ այնպիսի դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով **«օրենքի դրույթի կիրառում»** եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտվել է 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, ըստ որի՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «... իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի ...» բառակապակցության մեջ **«կիրառում»** հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Ելնելով վերոգրյալից, դատական կազմը փաստում է, որ վերոնշյալ դրույթները դիմողների նկատմամբ չեն կիրառվել, քանի որ վերաքննիչ դատարանի դատական ակտում այդ դրույթների վկայակոչումն իրավական հետևանքներ չի առաջացրել դիմողների նկատմամբ.

**2.2.** դիմողները չեն ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ խնդրո առարկա իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողները նաև չեն հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իրենց սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չեն հիմնավորել իրենց սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Բացի դրանից, դիմողների համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրանց նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Հետևաբար, վերոնշյալ իրավադրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներն ընդամենը բարձրացնում են դրանց կիրառման իրավաչափության հարցը՝ փորձելով այն ներկայացնել վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետևաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Միաժամանակ, դատական կազմն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 7-ի ՍԴՈ-705 որոշումը, ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի՝ անհատական դիմումի քննության ընդունումը մերժելու հիմք է հանդիսանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացիներ Աննա Չարչյանի և Կարինե Սահակյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

12 մարտի 2015 թվականի
ՍԴԿՈ/2-8